ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

№_____ «___» _____2023 թ. ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 50 ՏՈԿՈՍ ԵՎ ԱՎԵԼԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ, ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՐՈՇԵԼՈՒ, ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԿԻՐԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 8-Ի N 157-Ա ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունվարի 5-ի N 30-Ն որոշման պահանջները.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝ Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական դիտարկումներ անցկացնելու, դրանց գործունեությունը վերլուծելու և արդյունքներն ամփոփելու, գործունեության արդյունավետությունն որոշելու, գործադիր մարմինների ղեկավարների կատարած աշխատանքը գնահատելու կարգը կիրարկելու վերաբերյալ մեթոդական ուղեցույցը։

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչության պետի 2017 թվականի նոյեմբերի 8-ի «Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների կողմից 50

տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական մոնիտորինգի իրականացման ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչությանը տրամադրվող հաշվետվությունների լրացման կարգի և ցուցանիշների հաշվարկման բանաձևերի վերաբերյալ մեթոդական ուղեցույցը հաստատելու մասին» N 157-Ա հրամանը:

3. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի տեղակալ Գեղամ Հովսեփյանին:

07.03.2023

X

Signed by: AVETISYAN ARNAK 1701920336 ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության
պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի
2023 թվականի «_____» «____» -ի
N _____ - Ա հրամանի

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ 50 ՏՈԿՈՍ ԵՎ ԱՎԵԼԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ, ԴՐԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԼՈՒԾԵԼՈՒ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՆ ԱՄՓՈՓԵԼՈՒ, ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆՆ ՈՐՈՇԵԼՈՒ, ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԳՆԱՀԱՏԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԿԻՐԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն ուղեցույցով ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Պետական կառավարման մարմինների կողմից 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ առևտրային կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումներ անցկացնելու, դրանց գործունեությունը վերլուծելու և արդյունքներն ամփոփելու գործունեության արդյունավետությունը որոշելու, գործադիր մարմինների ղեկավարների կատարած աշխատանքը գնահատելու կարգը հաստատելու մասին» N 1262-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված NN 1, 2 և 3 ձևերի լրացման կարգը, ինչպես նաև գործունեության արդյունավետության գնահատման համար ներկայացվող ցուցանիշների հաշվարկման բանաձևերը։

2. Որոշմամբ հաստատված NN 1, 2 և 3 ձևերում բերված տեղեկանքները և հաշվետվությունը լրացվում են կազմակերպությունների կողմից, իսկ կազմակերպության ֆինանսատնտեսական վիճակի դիտարկումները անցկացվում, արդյունքները ամփոփվում, գործունեության արդյունավետությունն որոշվում և գործադիր մարմինների աշխատանքը գնահատվում է Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից։

3. Որոշմամբ հաստատված NN 1, 2 և 3 ձևերում բերված տեղեկանքների և հաշվետվության ցուցանիշները ներառում են տարեկան կտրվածքով կազմակերպությունների բոլոր կառուցվածքային ստորաբաժանումների, այդ թվում Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս գտնվող մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գործունեության արդյունքները:

4. Կազմակերպության հիմնական գործունեության տեսակ է համարվում այն տեսակը, որն արտադրանքի իրացման և ծառայությունների մատուցման ընդհանուր ծավալում կազմում է գերակշռող տեսակարար կշիռ (50 տոկոսից ավելի):

5. Կազմակերպությունը, եթե իր գործունեության բնագավառի պրոֆիլին համապատասխան արտադրական գործունեություն չի իրականացնում կամ ծառայություններ չի մատուցում, այլ իրականացնում է կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող տարածքների վարձակալության տրամադրում կամ այլ գործունեություն, ապա տվյալ դեպքում ընդունվում է, որ կազմակերպությունն իր գործունեության պրոֆիլին համապատասխան գործունեություն չի իրականացնում:

6. Որոշմամբ հաստատված NN 1, 2 և 3 ձևերի տեղեկանքների և հաշվետվության լրացման համար հիմք են հանդիսանում հաշվապահական հաշվառումը կանոնակարգող օրենսդրությամբ սահմանված փաստաթղթերի տվյալները:

7. Կազմակերպությունների ֆինանսական վիճակի խիստ վատթարացում կարելի համարել, եթե հիմնական ֆինանսական ցուցանիշներից որևէ մեկի (կազմակերպության ընտրությամբ) և լրացուցիչ ֆինանսական 5 ցուցանիշների (զուտ շահույթի (վնասի), իրացումից հասույթի, ընթացիկ իրացվելիության, գործառնական դրամական հոսքերի և աշխատանքի արտադրողականության) անկումը նախորդ տարվա համեմատությամբ կազմել է 50 և ավելի տոկոս կամ տեղի է ունեցել կուտարված վնասի ծավալի 10 տոկոսից ավելի աճ:

2. ՏԵՂԵԿԱՆՔՆԵՐ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

8. Որոշմամբ հաստատված NN 1, 2 և 3 ձևերում բերված տեղեկանքներում և հաշվետվության մեջ ներառված ցուցանիշները լրացնելու համար հարկավոր է օգտվել Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 11-ի «Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների ուղեցույցները հրապարակելու մասին» N 235-Ն, իսկ փոքր և միջին կազմակերպությունների դեպքում՝ 2010 թվականի սեպտեմբերի 16-ի «Փոքր և միջին կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտը հրապարակելու մասին» N 1209-Ն

որոշումների պահանջներով կազմված հաշվետվություններից։ Մասնավորապես, ըստ Հայաստանի Հանրապետության կառավարության N 235-Ն որոշմամբ հրապարակված «Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման հայեցակարգային հիմունքներ» հավելվածով ներկայացված հաշվապահական հաշվառման թիվ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» միջազգային ստանդարտով սահմանված ֆինանսական հաշվետվությունների ամբողջական փաթեթում ներառված տեղեկատվությունից։

9. Որոշմամբ հաստատված N 1 ձևում բերված տեղեկանքի վերաբերյալ՝

N 1 ձևում բերված տեղեկանքի 4-9, 17-21 այուները լրացվում են ֆինանսական վիճակի հաշվետվությունից՝ համաձայն համապատասխան ՀՀՄՍ-ի,

N 1 ձևում բերված տեղեկանքի 12, 13, 22, 26 այուները լրացվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունից՝ համաձայն համապատասխան ՀՀՄՍ-ի և զուտ շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունից՝ համաձայն համապատասխան ՀՀՄՍ-ի,

N 1 ձևում բերված տեղեկանքի 10 և 11 այուները լրացվում են ֆինանսական վիճակի հաշվետվությունից՝ համաձայն համապատասխան ՀՀՄՍ-ի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունից՝ համաձայն համապատասխան ՀՀՄՍ-ի,

N 1 ձևում բերված տեղեկանքի 14-16 այուները լրացվում են ֆինանսական վիճակի հաշվետվությունից՝ համաձայն համապատասխան ՀՀՄՍ-ի,

N 1 ձևում բերված տեղեկանքի 28-31 այուները լրացվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունից՝ համաձայն համապատասխան ՀՀՄՍ-ի։

10. Որոշմամբ հաստատված N 2 ձևում բերված հաշվետվությունն ամբողջությամբ լրացվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունից՝ համաձայն համապատասխան ՀՀՄՍ-ի։

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՂ ԵՎ ԳՈՐԾԱԴԻՐ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

11. Կազմակերպությունների գործունեության արդյունավետությունն որոշող հիմնական և լրացուցիչ ֆինանսական ցուցանիշները հաշվարկվում են տարեկան կտրվածքով։

12. Հիմնական ֆինանսական ցուցանիշներից (շահութաբերության ըստ իրացման ծավալի կամ ոչ ընթացիկ ակտիվների) որևէ մեկը կազմակերպության ընտրությամբ հաշվարկվում են հետևյալ բանաձևների օգնությամբ՝

1) շահութաբերության ցուցանիշն ըստ իրացման ծավալի՝

$$Շ_{ի} = Շ / Ի_{ի} \times 100$$

որտեղ՝

$Շ_{ի}$- շահութաբերության ցուցանիշն է ըստ իրացման ծավալի

Շ - զուտ շահույթի տարեկան մեծությունն է,

$Ի_{ի}$ – իրացումից տարեկան հասույթն է.

2) շահութաբերությունն ըստ ոչ ընթացկ ակտիվների՝

$$Շ_{ա} = Շ / Ա_{ը} \times 100$$

որտեղ՝

$Շ_{ա}$- շահութաբերությունն ըստ ոչ ընթացկ ակտիվների

Շ - զուտ շահույթի տարեկան մեծությունն է,

$Ա_{ը}$ – ոչ ընթացիկ ակտիվների տարեկան միջին մեծությունն է:

13. Լրացուցիչ ֆինանսական ցուցանիշներից ըստ իրացման ծավալի և ըստ ոչ ընթացիկ ակտիվների շահութաբերության ցուցանիշների աճի, ընթացիկ իրացվելիության ցուցանիշը և պարտքի գործակիցը, աշխատանքի արտադրողականության և գործառնական դրամական հոսքերի աճի ցուցանիշները հաշվարկվում են հետևյալ բանաձևերի օգնությամբ՝

1) ըստ իրացման ծավալի շահութաբերության տարեկան աճի ցուցանիշ՝

$$Շ_{իա} = Շ_{իհ} / Շ_{ին} \times 100$$

որտեղ՝

$Շ_{իա}$ - ըստ իրացման ծավալի շահութաբերության տարեկան աճի ցուցանիշն է,

$Շ_{իհ}$ - հաշվետու տարում ըստ իրացման ծավալի շահութաբերության ցուցանիշն է,

$Շ_{ին}$ - հաշվետու տարվան նախորդող տարվա ըստ իրացման ծավալի շահութաբերության ցուցանիշն է,

2) ըստ ոչ ընթացիկ ակտիվների շահութաբերության տարեկան աճի ցուցանիշ՝

$$Շ_{ըա} = Շ_{ահ} / Շ_{ան} \times 100$$

որտեղ՝

$Շ_{ըա}$ – ըստ ոչ ընթացիկ ակտիվների շահութաբերության տարեկան աճի ցուցանիշն է,

$Շ_{ահ}$ - հաշվետու տարում ըստ ոչ ընթացիկ ակտիվների շահութաբերության ցուցանիշն է,

$Շ_{ան}$ - հաշվետու տարվան նախորդող տարվա ըստ ոչ ընթացիկ ակտիվների շահութաբերության ցուցանիշն է։

14. Ընթացիկ իրացվելիության ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Ի_{ը} = Ա_{ը} / Պ_{ը}$$

որտեղ՝

$Ի_{ը}$ - ընթացիկ իրացվելիության ցուցանիշն է,

$Ա_{ը}$ - ընթացիկ ակտիվների տարեկան մեծությունն է,

$Պ_{ը}$ - ընթացիկ պարտավորությունների տարեկան մեծությունն է,

15. Պարտքի գործակիցը հաշվարկվում է հետևյալ բանաձևի օգնությամբ՝

$$Պ_{գ} = Պ_{ը} / Ա_{ը}$$

որտեղ՝

$Պ_{գ}$ - պարտքի գործակիցն է,

$Պ_{ը}$ - ընթացիկ պարտավորությունների տարեկան մեծությունն է,

$Ա_{ը}$ - ընթացիկ ակտիվների տարեկան մեծությունն է։

16. Աշխատանքի արտադրողականության տարեկան ցուցանիշն որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$Ա = Ի_{ի} / Ա_{թ}$$

որտեղ՝

Ա - աշխատանքի արտադրողականության տարեկան ցուցանիշն է,

$Ի_{ի}$ – իրացումից տարեկան հասույթի մեծությունն է,

$Ա_{թ}$ – աշխատողների տարեկան միջին ցուցակային թիվն է։

17. Հաշվետու տարում գործառնական դրամական հոսքերի տարեկան ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ բանաձևերի օգնությամբ՝

$$Դ_{հ} = Դ_{գ} / Ի_{ի} \times 100$$

որտեղ՝

$Դ_{հ}$ – հաշվետու տարում գործառնական դրամական հոսքերի տարեկան ցուցանիշն է,

$Դ_{գ}$ – հաշվետու տարում գործառնական դրամական հոսքերի տարեկան մեծությունն է,

$Ի_{ի}$ – հաշվետու տարում իրացումից հասույթի տարեկան մեծությունն է,

1) հաշվետու տարվան նախորդող տարվա գործառնական դրամական հոսքերի տարեկան ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Դն = Դն / Ին \times 100,$$

որտեղ՝

Դն – հաշվետու տարվան նախորդող տարվա գործառնական դրամական հոսքերի տարեկան ցուցանիշն է,

Դն – հաշվետու տարվան նախորդող տարվա գործառնական դրամական հոսքերի մեծությունն է,

Ին – հաշվետու տարվան նախորդող տարվա իրացումից հասույթի տարեկան մեծությունն է,

2) գործառնական դրամական հոսքերի տարեկան աճի ցուցանիշը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$Դտ = Դհ / Դն \times 100$$

որտեղ՝

Դտ -- գործառնական դրամական հոսքերի տարեկան աճի ցուցանիշն է,

Դհ – հաշվետու տարվա գործառնական դրամական հոսքերի տարեկան ցուցանիշն է,

Դն – հաշվետու տարվան նախորդող տարվա գործառնական դրամական հոսքերի տարեկան ցուցանիշն է։

4. ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ ՈՐՈՇ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

18. Որոշմամբ հաստատված NN 1 և 2 ձևերում բերված տեղեկանքի և հաշվետվության ցուցանիշները լրացնելիս կարող են օգտվել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) կողմից 2016 թվականի մարտի 4-ի N 01-Ն որոշմամբ հաստատված կազմակերպության ֆինանսական ցուցանիշների լրացման հրահանգից, իսկ կազմակերպության գործունեության արդյունավետության մակարդակը որոշող ցուցանիշների հաշվարկման ժամանակ կարող են օգտվել Խորհրդի 2015 թվականի նոյեմբերի 13-ի N 24-Ն որոշման դրույթներից։ Մասնավորապես, տվյալ որոշման համաձայն աշխատողների ցուցակային տարեկան թվաքանակի միջինը հաշվարկվում է տվյալ տարվա բոլոր ամիսների աշխատողների թվաքանակի (յուրաքանչյուր ամսվա վերջի դրությամբ) հանրագումարը

բաժանելով 12-ի կամ առաջարկում ենք ոչ ընթացիկ ակտիվների տարեկան մեծությունն որոշել ելնելով տարվա սկզբի և վերջի մնացորդների հանրագումարը բաժանելով 2-ի։

5. ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՏԱՐԵԿԱՆ ԿՏՐՎԱԾՔՈՎ ԱՄՓՈՓԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

19. Մշտադիտարկման արդյունքները տարեկան կտրվածքով ամփոփելիս ներկայացվում են ըստ առանձին ոլորտների (ըստ պետական կառավարման մարմինների ենթակայության) և առանձին խոշոր կազմակերպությունների՝ հիմնական և լրացուցիչ ֆինանսական ցուցանիշների դրական կամ բացասական փոփոխությունները նախորդ տարվա համեմատությամբ։ Ներկայացվում են այն կառավարման ոլորտները, որոնցում հաշվետու ժամանակահատվածում կատարվել են դրական (աշխատել են շահույթով) կամ հակառակը՝ ոչ դրական տեղաշարժեր՝ աշխատել են վնասով և ավելացվել են կուտակված վնասի ծավալը, ինչպես նաև գործունեություն չեն ծավալել։

20. Մշտադիտարկման արդյունքները վերլուծելու և ամփոփելու ընթացքում ներկայացվում են նաև կազմակերպությունների գործունեության արդյունավետության գնահատման արդյունքները։

21. Մշտադիտարկման արդյունքներն ամփոփելիս ընդհանուր տեղեկություններ են ներկայացվում կազմակերպությունների շենք, շինությունների օգտագործման վիճակի և վարձակալության տրամադրման արդյունքների վերաբերյալ։

22. Կազմակերպությունների ֆինանսատնտեսական վիճակի դիտարկում անցկացնելու, գործունեության արդյունավետությունն որոշելու և գործադիր մարմինների ղեկավարների աշխատանքները գնահատելու համար միայն 2022 թվականի կտրվածքով անհրաժեշտ է N 3 ձևում ներառված տեղեկությունները պահանջել նաև հաշվետու տարվան նախորդող տարվա (2021թվականի) դրությամբ։